մի գիւղ է, որի միջով հոսում է մի մեծ առու, որը ոռոգում է Խունկի դաշտավայրերը, որոնք փռված են արևելեան, հիւսիսային և հարաւային կողմերում։ Գիւղը բաժանւում է երկու թաղամասի. առաջին թաղը բաղկացած է միմեանցից հեռու ընկած եօթը տներից, որոնք փռված են առուի հարաւ-արևմտեան կողմը, մի բլրի փէշին, իսկ երկրորդ թաղը բաղկացած է 57 տնից, որոնք շինված են կողք-կողքի և գտնւում են առուի արևմտեան—արևելեան կողմում։ Սրա կողքին երևում են հին աւերակների մնացորդներ։ Այժմ ազգաբնակչութիւնը բաղկացած է 64 տնից 410 շնչով, որի 215-ը արական է և 195-ը իգական. նրանք գաղթած են Հին—Զուղա գաւառի Աբցխա գիւղից 1606 թ-ին, Շահ-Աբբասի ձեռքով. պարապում են գլխաւորապէս հողագործութեամբ։ Խմելու ջուրն աղբիւրի է, որոնք բղխում են առուի փէշերից և հանդարտ քչքչալով վազում են դէպի առուն։

Գիւղն պատկանում է եօթը կալւածատէրերի, որոնք են Հասան-Սօլթան, Խանբաբա, Մահմուտ, Ալի-Մահմէտ, Աբդիւլ-Հօսէյին, Զոհրաբ և Ալի։ Գիւղացիներից միայն երեք տուն հող ունեն, հողազուրկները մշակում են աղաների հողերը, որից ստացած բերքի $^1/_3$ մասը տալիս են նրանց. մօտաւորապէս տարեկան 515 բեռ ցորեն են տալիս, բացի այդ վճարում են նաև 50 թուման աղաներին և 100 թուման էլ պետութեան՝ իբրև հարկ։

Հողը մեծ մասամբ ջրովի է. հերկում են արօրով։ Տեղական բերքերն են ցորեն, գարի, հաճար, կտաւահատ, արևածաղիկ և այլն։ Գիւղում կայ Ս. Գէորգ եկեղեցին, որի բակում գտնւում է խալիֆայական դպրոցը, ուր սովորում են 20-ից աւելի աշակերտներ։

Որովհետև այս գիւղը շրջապատված է լօռական և խանական գիւղերով, ուստի յաճախ է ենթարկւում լօռերի և ինքնիշխան խաների յարձակմանը. նրանք իւրաքանչիւր աշնան և ձմրան մտնում են գիւղ և 5—600 թումանի վնաս են տալիս խեղճ գիւղացիութեանը։ Որպէսզի դրանց մասին որոշ գա-